

Ինչո՞ւ հասանք այդքան դժին օրերու։
Ինչո՞ւ ծննել տըւիք միգի, կամ ինչո՞ւ
չանք մեզի մահ չըտըւիր,
Հակառակ դիմելով որով՝ տեսնելով
Մեր հայրենիքը ազախն և ըստուկ
Օտարներու, ժանտերու,
Եւ խածխըծող խարտոցով
կըրծուին ի՞ր լաւութեանց,
Դիմընդակ ցան՝ որ կը բզբտէր զանիկա,
Մեզ չըտըւիր մասամբ մեղմել ամոքել
իրեն սփոփանք և զօրավիգը ըլլալով։
Ա՛հ, ո՛չ արիւնը մեր, ոչ կեանքն ունեցար
Ո՛վ սիրելի, ու ես քու
Անագորոյն բախտիդ համար չեմ մեռած։
Հոս սրբտիւ մէջ գուժ և զայրութեան
Մարտեցան, ինկան շատերը մենէ,
Սակայն ո՛չ թէ օրհասական իտալիոյ,
Այլ իրենց դուժ բըռնաւորաց համար վէտ։

Հայր, եթէ չես բարկանար,
Ինչ որ երկրի վըրայ էիր՝ ալ չես ան.
Կը մեռնէին ռուսական
Լերկ մարգերուն վրայ, ո՛հ, ուրիշ մահերու
Արժանի քայլքն իտալեան.
Ու անոնց դէմ կը մըղէին մարտ հահդ
Ողն ու երկիւնքն ու զգալներն ու մարդիկ.
Գուռնդ գուռնդ տապաստ կ'իյնային
կիսամերկիկ, վըշտաշարար՝ Լարինուտ,
Եւ էր հիւանդ մարմնոց ստողոյցն անկողին։
Անհրաժեշտ վիշտերու մէջ այն ատեն
Այս անձկալի մայրն յիշելով՝ կ'ըսէին.
Ո՛հ, ոչ ամպերն, ոչ հովերն,
Այլ մեզ երկաթն անշնչացուց, և քու, ո՛վ
Մեր հայրենիք, բարւոյդ համար։ Ահա մենք
Քենէ հեռու, չըքնադագեղ հասակն երբ
Մեզ կը ժրպտի, բոլոր երկրէ անձանօթ՝
Դահիճներուդ համար անա կը մեռնիրք։
Հիւսիսային անապատն
Ու անտառները չըլուն
Եղան անոնց որդեկոծին իրազեկ։
Ու մեռան այսպէս անոնք։
Ու բացօթեայ ցուրտ դիակներն անտէրուն՝
Չիւնեղէն այն սարսափելի ծովուն վրայ
Յօշատեցին զազաններն։
Ու պիտ' անունն ազնիւներուն, քաջերուն
Միշտ հաւասար զոյգ ըլլայ
Պըղերգներուն և վատերուն անուան հետ։
Ո՛վ սիրելի հոգիներ,
Թըշուառութիւնը ձեր անհուն է թէեւ,
Հանդարտեցէ՛ք. և այս թող
Ձեզ ըսփոփէ, որ պիտի
Ձե մի սփոփանք չունենաք
Այս անու գալիք դարուց մէջ։
Հանդեպէ՛ք ծոցը ձեր անշափ տազնապին,
Ո՛վ դուք անոր հարազատ սերտ որդիներ,
Որուն յոտին չուառութեան
Մի միայն ձերն է որ կըրնայ նրմանիլ։
Ձեր հայրենիքը ձեռնէ չի զանգատիր
Արդէն, իր ցաւն անոր դէմ է որ ըզձեզ
Մըղեց իր դէմ կըռուելու.
Այնպէս որ միշտ պիտի՝ արտասուէ դառնապէս
Եւ իր արտօսը ձերինին հետ խանէ։

Իրեններէն, ո՛չ թէ, մէկուն սըրտին մէջ
Դընէր անոր համար գուժ,
Անոր համար՝ որ յաղթեց
Ուրիշ ամէն փառքերու,
Ու գինքը՝ խոն՝ ապիկար՝
Քաշէր հանք խաւարչուտ, խոր անդունդէն։
Ո՛վ փառաւոր հոգի, ըսէ դուն ինծի.
Իտալիայիդ մեռած է սէրը արդեօք.
Ըսէ՛, մարած է րոցն որ զքեզ չըրգենցեց.
Ըսէ՛, պիտ' ալ չըկանաչնայ մըրտենին
Որ մեր երկայն ատեն աղէտքն ըսփոփեց.
Բոլոր փոշի՛ պիտ' ըլլան մեր պըսակներն։
Ու պիտի մէկը չեւլէ՛
Որ ոեւէ մասամբ քեզի նըմանի։
Կորսրելեցանք յախտան։

Ու մեր կորանքը չունի՛ ոչ մի սահման։
Յորչափ ապրիմ պիտի մըռնէմ ամէն կողմ.
Ո՛վ խորթացած սերունդ, դարձիր պապերուդ.
Աւերակները տես այս, տես քերթուածներն
Ու նըկարներն ու տաճարներն ու կուէր.
Մըտածէ՛ ի՛նչ երկրի վըրայ կը կոխես.
Ու եթէ չի՛ կըրնար ըզքեզ արթնցնել
Լոյսն այդքանի՝ օրինակաց, աղէ ի՛նչ
Կեցերէն, ո՛հ, էլիր զքնա կորսուէ։
Այ՛ս՝ վեհապանծ հոգեւոջ՝ դայեալն ու դըպրոց
Ձէ՛ արժանի այդքան նեխած բարբերու.
Թ՛ է՛ վատերու օթեան,
Լաւագոյն է մընայ թափուր և այրի։

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԱՆՍ

Ս Ր Ո Վ Ո Ւ Շ Ր Ո Վ

Պ Ա Տ Մ Ա Վ Ա Ն Վ Ե Պ

ՀԵՆՐԻԿՈՍ ՍԵՆՔԻԵՎԻԶԻ

(Նախըմթ. տես էջ 86)

Բ.

Առաւօրը Չիլիին հասնելով՝ Արշիպեպի
իշխան Էրեմիայի տունը իջաւ, որպէս զի
մարդիկ և կենդանիները խորմէն ցամաքով
ըրած երկայն ճամբորդութենէն հանգչին։ Քիչ
մը կազդուրուելէն վերջ, զմաց գտնալու Սաւ-
վելիքովըքն՝ դրօշակալիւր և նախկին ոստի-
կան Հասարակապետութեան, սորն որ թէւ-
պէս իշխանին ծառայութեան մէջ չէր, սա-
կայն կը վայելէր անոր սերը և աներմու-
թիւնը։ Արշիպեպի կը փութար գիտնալ թէ
Լուպիւնէն հրամաններ կան. սակայն իշխա-

նը՝ փոխանակ նոր հրահանգներ տալու, կը հրամայէր որ եթէ Սըշեպուցքի նպաստաւոր պատասխանս բերած է, թող չաճապարէ գառնալ, զինուորները և ձիերը շատ չյոգնեցնելու համար: Խանին հետ ունեցած բանակցութեան նիւթը այս էր. իշխանը կը պահանջէր որ քանի մը թաթար փոքր իշխանները՝ որոնք իրեն Տնիներէ մնկն ունեցած երկիրներու մէջ առօրէականութիւններ ըրեր են և զորոնք արդէն ինքը զսպեր է, պատժուին: Խանը կը խոստանար առաջիկայ Ապրիլի՝ ուղարկել մէկը այն կողմաւոր իշխանները պատժելու համար. և իշխանը իրեն շլատակելու համար՝ նուէր կը զրկէր անոր գեղազաւտ նժույզ մը և սամոյր զիւարկ մը: Սըշեպուցքի՝ իրեն յանձնուած հրամանը կատարած ըլլալով և իշխանին բարեւորութիւնն ալ լաւ ճանչնալով, զո՛հ եղաւ որ քիչ մը ժամանակ պիտի կարենայ մնալ Սիւրիքի, մանաւանդ որ ծեր նախկին—ոստիկանի միտքի մէջ էր քաղաքին մէջ տեղի ունեցած զէպքերը տեսնալով: Խոսակցելով՝ միասին գնացին վաղը Գոպուլային, որ կապելայ մուշէր և Ժամն զինիւնի կը ծախէր, ուր՝ թէպէտ առուաւտ կանուխ, յաճախորդաց բազմութիւն մը գտան: Տուրեւառի օր էր, բանակին համար սահմանեալ կենդանիներ ալ հասեր էին, ուստի ազմուկը մեծ էր: Մեծերը՝ ըստ իրենց սովորութեան, հաւաքուած էին հրապարակին մէջ, Ձաւգակաւորի լսուած անկիւնը, Դուպուլայի կապելային մէջ: Հոն էին Մայրապոյն Լեւնաստանի վարձուորները, Սիւրիքի իշխանութիւնք, միշտ կը կարուածաւորէր, խնայողութեամբ ապրող ազնուականներ, աստիճանաւոր Ղազախներ և հասարակ քաղաքացիներ: Ընկուզենի երկայն սեղաններու շորս կողմը նստած՝ բարձր ձայնով խմբիկիցքի փախտահան վրայ կը խօսէին, որ օրուան շատաչ հանող զէպքն էր: Սըշեպուցքի՝ Սասիվելքուլքի հետ առանձնի անկիւն մը նստելով՝ հարցուց խմբիկիցքի ղեկավարը, որուն անունը ամենուն բերանն էր:

— Կարելի՞ բան է որ չճանչնաս զինքը, ըսաւ զարմացմամբ ծեր զինուորը:

— Ձրվէժներու մօտ բանակին քարտուղարն

է, կալուածատէր Սուպուդլի ... և ինծի ալ բարեկամ, աւելցուց ցած ձայնով: — Հին բարեկամներ ենք, միասին շատ արշաւանդներու մէջ գտնուած ենք, որոնց մէջ նշանաւոր եղած է, մանաւանդ թէ՛ թէ՛ թէ՛ թէ՛ թէ՛ կարծեմ անոր պէս փորձ և քաջ զինուոր չկայ բոլոր Հասարակապետութեան մէջ: Անոր վրայօք բարձր խօսիլ չէ կարելի, սակայն ստուգիս ակաման մըն է՝ որուն աւելի կը հնազանդին Ղազախները քան թէ իրենց մեծերուն: Թէպէտ զոռոյ, խռովարար և վտանգաւոր մէկն է, սակայն բարի սիրտ մ'ունի:

— Ինչո՞ւ համար փախեր է:

— Գահերէց Ձափընքի հետ ունեցած խնդիրներուն պատճառաւ, կ'ըսեն, սակայն ատենք պարսպ խօսքեր են: Գիտենք թէ այս կալուածատէրները ինչպէս կը վարուին մէկմէկու հետ: Կը պատմուի թէ գահերեցին կ'ընէր հրապարակէր է, իսկ նա ալ անոր սիրուէին առեւանդելով՝ սաստիկ զայրացուցեր է զինքը. աւելի հաւանական է այս պատմութիւնը, քանի որ կանանց ուղեղը հողմացոյցի նման յեղեղուկ է: Այս ստալէ է որ ինքն պատճառը քաղաքական խնդիր մըն է, իսկ այս զրոյցները ունայնաբանութիւնք են: Հոս է զազախ գնդապետն և մեր բարեկամը՝ ծեր Պարսպաշը. սա չեմ գիտեր ինչպիսի՞ արածութիւններ և հրամաններ ունէր ձեռքը, որոնց զօրութեամբ Ղազախները պարտաւորեալ էին ազնուականութեան զէմ ելլալու. բայց սրովհետեւ ինքը բարի մէկն է, պահեց զանոնք և չուզեց օգտուիլ անոնց մով: Արդ, խմբիկիցքի ճաշի կը հրաւիրէ զՊարսպաշը, և այն միջոցին իրեն մարդիկը հրաւիրելոյն-տունը կը զրկէ՝ որպէս զի գողնան մերոյիշեալ թուղթերը: Հիմայ կը հասկընաւ թէ՛ ի՞նչ որ ալ ըլլայ՝ կ'ընայ այն թուղթերն օգտուիլ և Սուպուլայի ապրտաւորութեան նման ապստամբութեան մը կրակ տալ: Քեզի ըսի. վտանգաւոր մարդ մըն է ... :

— Ճշմարիտ աղուէս մը: Ինչպէս զիս ալ այս խնդրին մէջ խառնեց, — գոչեց զարմացմամբ Սըշեպուցքի: — Այս գիշեր իսկ անմշակ զաշարն մէջ հանդիպեցայ անոր և խեղդի հանդգցէն ազատեցի զինքը:

Ստովիլիքովսքի ձեռքերովը զլուխը ձեռնելով գոչեց.

— Կարելի՞ բան չէ:

— Ինչպէս կարելի չէ: Ինքզինքը Սասւոյցքի գնդապետ ներկայացուց, և բաւ թէ գետափնային Քուստաք կ'երթար: Սակայն տեսնելով որ փոխանակ գետով երթալու՝ անապատ դաշտը կտրել անցնելի կ'ուզէր, չհաւատացի ըսածին:

— Խորամանկ է: Ո՞ր տեղ հանդիպեցաւ անոր:

— Ունէրի մօտ, Տնիկերի աջ ափանց վրայ: Յայտնի կը տեսնուէր որ Սեչխա կ'երթար:

— Էւ կ'ուզէր խոյս առլ Քուստաքէն: Հիմայ հասցայ: Շատ մարդ ունէր հետը:

— Քառասուն հոգի. սակայն ասոնք ուշ հասան: Եթէ ես չըլլայի՝ գահերէցին ծառաները զինքը կը խզէին:

— Գահերէցին ծառաները:

— Այո՛, իրեն խօսքերն են:

— Խոկ գահերէցը ինչպէս գիտէր անոր մէջ գնացած ըլլալը, քանի որ քաղաքին մէջ ոչ ոք տեղեկութիւն ունի:

— Ձեմ գիտեր: Թիբեու խմիչներէն ոտաւ խօսեցաւ:

— Ինչ որ ուր ըլլայ, սարօրինակ է գէպըր: Հիմայ զինքը ձեռքակալելու հրաման ելած է:

Դոյն վայրկեանին պզտիկ հողատէր մը մեծ շառաշով ներս մտաւ, զոնկոր գտնելով պատերուն, չորս կողմը նայեցաւ և բարձր ձայնով.

— Յարգանքներս ամենուր, բոտա:

Քառասունի մօտ մարդ մըն էր, կարճ հատակով, խրոխտ կերպարանքով, շարժուն և դուրս ցցուած աչքերը անոր գոտողութիւնը աւելի զուրս կը ցատքեցնէին: Ձինքը տեսնողը մէկէն կը գուշակէր բոտն բնաւորութիւնը:

— Յարգանքներս ամենուր, — կրկնեց աւելի բարձր ձայնով, առաջին անգամ պատասխան ընդունած չըլլալուն պատճառաւ:

— Բարեւ, բարեւ. — պատասխանեցին քանի մը ձայններ:

Չափիւնքին էր նա, փոխ-գահերէց Չիկրինի, երկաստարգ գրօշակակիր Գոնիէց-

բուլքիի հաւատարիմ մարդը: Ամենուն ասելի՛ իրեն շար լեզուին համար, բայց կը վախնային իրմէ և կ'անհամծէին: Միայն զՍասւոյցքովսքին կը յարգէր՝ անոր արժանեաց և արիւթեան համար: Չանիկա տեսնելով՝ շուտով անոր մօտեցաւ, և հարեանցի կերպով բարեւելով Սեչխուցքին, գինիի շիշովը միտին զիմացը նստեցաւ:

— Ուրեմն, հարցուց նախկին-ստիկանը, խմիչներէն ի՞նչ յորս:

— Ձինքը կախազան հաներ են կամ քիչ վերջ պիտի հանեն: Ահ, հիմայ ձեռքս իշնալու էր՝ քանի որ պատապարտութեան հրովարտակը ելած է:

Այսպէս խօսելով՝ բոնցի ոյնպիսի հարուած մը տուաւ տեղանին՝ որ զինին թափեց:

— Ուշ գիր գինիին, բոտա Սեչխուցքի:

— Այս ստոյղ է որ փախեր է և ուր ըլլալը չի գիտցուիր, — ընդմիջեց Սասւոյցքովսքի:

— Ո՛չ ոք գիտէ բայց ես, այո՛. ինչպէս ճամարիւս է որ ես Չափիւնքի կը կոչուիմ: Կը ճանաչանա՞ւ վէտքն . . . : Գործիք մըն է որ թէ՛ անոր կը ծառայէ և թէ՛ ինծի, և վէտքն անոր Յուզան պիտի ըլլայ: Խմիչներէն մարդկանց հետ միացիր է և անոր առած ամէն քայլերը գիտէ: Յանձն առեր է զանիկա կենդանույն կամ սեռած ինծի բերելու. գիտնալով անոր բռնելիք ճամբան, իրմէ առաջ անապատ դաշտ գնաց:

Հոս երկրորդ հարուած մ'ալ տեղանին:

— Ուշ գիր գինիին, — կրկնեց Սեչխուցքի, սաստիկ հակախուժիւն մը զգալով այդ մարդուն գէմ: Չափիւնքի կարմրեցաւ, և դուրս ցցուած աչքերը պարձնելով՝ խրոխտ կերպով մը նայեցաւ Սեչխուցքի: Սակայն անոր վրայ տեսնելով վիշտիւնիցքիին նշանները, անմիջապէս զսպեց ինքզինքը, նկատելով որ իւրաքանչեւ հեռու չէր, և թէ վառա՞գաւոր էր նախատել իշխանին մէկ ծառայն: Գիտէր պարձեալ որ իշխանին քնտրած մարդիկը աշխարհիք էին՝ որոնց վրայ յարձրեցնելն առաջ՝ լաւ մը մտածելու էր:

— Ուրեմն վէտքն յանձն առեր է խմիչներէն ձեռքակալել, — հարցուց նախկին ստիկանը:

— Եւ պիտի ձերբակալէ, կամ եւ Չափ-
լինսքի չեմ:

— Եւ ես կ'ըսեմ քեզի որ պիտի չկա-
րենայ ձերբակալել զայն: Խմբինեցքի ա-
զատեր է դարանէն, և փախեր է: Այն մար-
դուն Հետ խաղալ չէ կարելի: Քեզմէ աւելի
ուշիմ և աւելի կորովի է, և նաեւ աւելի
բախտաւոր . . . : Բնաւորութիւնս չափազանց
տաք է . . . : Նորէն կ'ըսեմ քեզի, Խմբինեց-
քի ողջ առողջ փախեր է. և թէ ինծի չես
Հաւատար, Հարցուր այս առպիտին որ զին-
քը տեսնէ երէկ իրիկուն ամմշակ վաշ-
տին մէջ:

— Անկարելի է, — գոչեց ապուրթեամբ
Չափլինսքի, ձեռքերը գլխուն տանելով:

— Աւելին ըսեմ քեզի . . . : Զինքը ա-
զատողը այս առպեան եղեր է, և յաղանք
չունի, վասն զի Խորիմէն կը դառնար և Հրո-
վարաակէն տեղեկութիւն չունէր: Դաշտին
մէջ մարդ սը կը տեսնէ և աւազակաց ձեռ-
քը ինկած կարծելով զինքը, օգնութեան կը
Հասնի: Հիմայ կանուկ կամ ուշ անոր այ-
ցելութեանը սպասէ. և կարծեմ շատ գոհ
պիտի չմնաս, վասն զի ճշմարիտը խօսելով
չափազանց խառնութեամբ վարուեցար Հնար:

Չափլինսքի ռաքի ելաւ. բարկութիւնը
զինքը կը խզէր, երեսը կարմիր էր, աչ-
քերը ակնակապիճներէն դուրս կը հոսէին:

— Ինչ կը ըսեմ Գոն. . . : Գոն, — և
խօսքերը կը ճառաւաղ բերնէն կ'ելլէին, — Հա-
կառակ Արամանին Հրամանին . . . : Ահ, չեմ
կրնար ինքզինքս զսպել . . . :

Խակ Արշեղուցքի նստած տեղէն շարժե-
ցաւ. կրկնեցաւ արմաւկներովը սեղանին, և
ճրնճակի պիտող բազէի նման՝ անխորթափ
աչքերով կը նայէր Չափլինսքիին:

— Ինչ եղաւ քեզի, — Հարցուց վերջա-
պէս: — Շահը պոչին վրայ յարձրկող ճանճի
մը պէս կը յարձրկու վրաս:

— Դատաւորին դիմաց պիտի քարշեմ
զքեզ, զքեզ . . . : Արհամարհեր ես Հրովար-
տակը, դուն . . . : Ես . . . : Ես . . . : Գոնք . . . :

Այնպէս ուժով և բարձր կը խօսէր՝ որ ա-
մէնքը իրեն դարձան: Եւ թէպէտ անոր կուտա-
րար ըլլալը պիտէին, սակայն կը զարմանային
որ կը յանդգնի նախկին — ռապիկանին ներ-

կայութեան խորխուտը, և այն՝ վիսնիովիեց-
քի սպայի մը դէմ:

— Լո՛ւ, — ըսաւ ծեր գրօշակակիրը, —
ասպիտը ինծի Հետ է:

— Զինքը դատաստանի պիտի քարշեմ,
այո՛ր, կ'երկոյնում անուամբ դեւերուն, որ զինքը
դատի պիտի Հանեմ, — կ'որոտար միշտ Չա-
փլինսքի, առանց մէկէ մը ակնածելու:

Արշեղուցքի ռաք ելաւ, և մէջքէն կախուած
սուրը, առանց պատեանէն Հանելու, մէջ-
տեղէն բռնելով՝ երախակալը յիմարին քնին
մօտեցուց:

— Ըսէ տեսնամ, ի՞նչ հոտ կու գայ առ-
կէ, — ըսաւ Հանդարտութեամբ:

— Մահ և դատապարտութիւն, — սրո-
տաց Չափլինսքի՝ ձեռքը սուրին տանելով:

Սակայն դեռ չէր Հանած պատեանէն՝
երբ Արշեղուցքի Հարուածով մը զինքը գե-
տին տապալեց, և մէկ ձեռքովը վզէն բռնե-
լով և միւսովը մէջքէն, սկսաւ գէպի գուռը
տանիլ:

— Պարսնե՛ր, — պոռաց, — տեղի տուէ՛ք
եղջիւրտոր գազանի մը, չըլլայ թէ կողեր-
նիդ կտորբալէ:

Այս ըսելով՝ բռնան ճակատը զարկաւ
գրան, և երբ դուր բացուեցաւ, նետեց զայն
փողոցին մէջ, և ամենայն Հանդարտութեամբ
գարձաւ իրեն տեղը:

Սրահին մէջ վայրկեան մը լռութիւն տի-
րեց: Արշեղուցքի ոյժը մեծ տպաւորութիւն
ըրեր էր ներկայ եղողներուն վրայ: Սակայն
քիչ մը վերջ բարձրաձայն ծիծաղի շտաշ
մը պատերը զրդեց:

— Կեցցէ՛, — պոռացին ոմանք:

— Նուապեր է, — կըսէին ուրիշները
դուրս նայելով. — բուրբուրին արեան մէջ
թաթիւներ է: Հիմայ կը վերցնեն պինդը:

Վիրատորելոյն քանի մը Համախոհները
միայն լուս կեցեր էին, և որովհետեւ չէին
Համարձակիր յարձրկողին բան մ'ըսել, ծուռ
կը նայէին անոր:

— Գաւա իրենը. ի՞նչպէս ալ կը պոռչը-
տար շունը, — ըսաւ գրօշակակիրը:

— Անպիտան շունը, — ըսաւ, մօտենա-
լով Արշեղուցքի, թանձրամարմին, միակա-
նի մարդ մը՝ որուն ճակատին մէջտեղ ծակ

մը կար, ուսկից կը տեսնուէր ոսկորը : — Ներէ ինծի որ հիացումս յայտնեմ քեզի . ժաննի Չակոյպա, մականուանեալն Ծաղկոտ, ինչպէս արդէն յայտնի է այս ոչանէն, որ արդիւնք է առաջակի մը գնտակին երբ Ս. Երկիրը ուխտի կ'երթայի :

— Լու՛, — խօսքը կարեց նախկին — սուսիկանը : — Դուռն ինքզ մեկի պատմեցիր որ գլուխդ գինիի շէշով մը կտարեր են Ռադովի մէջ :

— Ո՛հ, աէր, գնտակ մը ծակեց : Ռադովի խնդիրը բոլորովին տարբեր է :

— Կնայ ըլլալ որ Ս. Երկիր երթալու ուխտ ըրեր են, սակայն երբեք հսն գնացած չըլլալէ ալ ստոյգ է :

— Առկէց թնչ հետեւանը . . . չգնացի՛ վասն զի Ղալաթիոյ մէջ վատաբեկեցայ մարտիրոսութեան պատիւը . եթէ սուս կ'ըստիմ՝ ականջնիւրը կտրուած հոգեհագործին մէկն ըլլամ, պիտի չուն մը, ե ոչ այն ազնուականը որ եմ : Կենացոյ, տեղակալ :

Ուրիշներ կամաց կամաց մօտեցան Սըշեհուցքի հետ ծանօթանալու ե իրենց հիացումը անոր յայտնելու համար : Աստի Չափլինքի հանդիպած պէպքին վրայ ամէնքն ալ կ'ուրախանային : Գաւառին բոլոր ազնուականութեան ծանօթ էր Չափլինքիի ե խմբիւնեցքի մէջ եղած թշնամութիւնը, ե վերջոյս կողմը կը բռնէին խմբիւնեցքի՝ իրեն մարտիկ՝ մեծ համբաւ ունէր, անոր շատ քաջութիւնները կը յիշուէին : Ծանօթ էր դարձեալ որ նոյն իսկ թագաւորը վրան մեծ համարմունք ունի ե ուզելու է անձամբ ծանշուալ զինքը : Ռեստի այդ թշնամութիւնը կը նկատէին Ուզրանիոյ մեծամեծներու մէջ սուրբական դարձած ե յաճախ տեղի ունեցող վէճերէն մին, ե ամէնքն ալ այն անձին կողմը կը կը բռնէին՝ որ գիտցեր էր համակրանք վաստակիլ, բնաւ չկատարածելով որ այս անգամ վէճը ահաւոր հետեւանքներ պիտի ունենար : Ազնուականաց ու կաթողիկ ե օրթոքս կղերին աչքերը շատ ուշ բացուցան, ե սկսան տանել խմբիւնեցքին :

— Կեցցէ՛ Վիսնիովիցքի . — կանչեցին շատերը՝ Սըշեհուցքի չորս կողմը հաւաքուած : — Խմենք ի միասին : Այսպէս դեռ

երիտառարդ, ե արդէն իշխանին տեղակալ : Կեցցէ՛ Երեմիա իշխանը : Իրեն հետ աշխարհիւ ծայրն ալ երթալու պատրաստ ենք . . . Թորքաց ղեմ, թաթարաց ղեմ :

— Ի Ստամբուլ, Կեցցէ՛ մեր վեհափառ աէրը Լատիւալ Դ. — կը պոռար Չակոյպա ամենէն աւելի բարձր, որ կարող էր ամբողջ բանակի մը չափ խմել ե պոռալ :

— Մտիկ ըլլէք, — որոտաց այնպիսի ձայնով մը՝ որ պատուհաններու ապակիներն անգամ օտրսեցան, — արդէն Սուլթանը դատի կանչելու եմ՝ Ղալաթիոյ մէջ վրաս եղած յարձակումի համար :

— Եթէ չես ուզեր որ լեզուդ բերնիդ մէջ չսրնայ, սուս մի խօսիր :

— Ո՛հ, պատուոյս վրայ կ'երկոմ :

— Լու՛, անմիա շատախօս :

— Այո՛, կ'ըսեմ ձեզի, մինչեւ Քարձրադոյն Ատեանը պիտի գիմեմ :

— Այլ բաւական է, միմոս :

— Իրաւունքս ճանչցնել պիտի տամ, զինքը անպատիւ պիտի հրատարակեմ : Եւ ապա՝ պատերազմ մահուաչափ Չեր կենաց, տեսք :

Ծիծաղն ընդհանուր էր : Սըշեհուցքի անգամ կը ծիծաղէր, լեզուալ զուրի դարձած էր քիչ մը : Չակոյպա կը շարունակէր բարձրաձայն շաղակաւաւ, Բարեբախտաբար մէկը զինքը լսեցողք լծելն ըրաշելով, ե Լիւլուսն իրացուց, յատուկ շնչաւով մը բաս :

— Չակոյպա, խնդրեմ զիս տեղակալին ներկայացնէիր :

— Սիրով, ամենայն սիրով Տեղակալ, կը ներկայացնեմ քեզի Լանկինոս Բոսպորիէնցա : Շարաթէ մը ի վեր այս ազնուականին ծախքովը կը խմեմ. քոսկին պէս ծանր սուր մ'ունի . այդ սուրը, առոնց կաստակի, իրեն ըզդերն շափ ծանր է : Սակայն եթէ այսպիսի ապօրինակ մէկու մը ուրիշ տեղ հանդիպած եմ, թող ապուշ ըստիմ, ինծի գինի խմցնողին չափ :

— Ո՛հ, որանչելի՛ գովասանք, — ըսին ծիծաղելով ներկայ եղողները :

Իսկ Լիթուանիացին՝ փոխանակ բարկանալու՝ բարեմտութեամբ ժպտելով՝ արհաւարհելու ձեւ մ'ըրաւ :

— Բաւական է, բաւական. այս մարդուս խօսելը լսելը տանջանք մըն է, — կրկնեց քանի մ'անգամ:

Արշեղուցքի հետաքրքրութեամբ դիտեցնոր եկողը՝ որ իրաւցնէ տարօրինակ մէկն էր: Այնչափ բարձր էր հասակաւ՝ որ գլուխը գրեթէ առաստաղին կը պչէր, իսկ չափէ վուրս նիհարութիւնը զինքը զեռ աւելի բարձր կը ցուցնէր: Թէպէտ կաշի և ոսկր էր, սակայն լայն ուսերը և զլուս վիզը արտաբայ կարգի ոյժ մ'ունենալուն նշաններ էին: Այնպիսի ներս քաշուած փոր մ'ունէր՝ որ զինքը սու վամահ մէկը պիտի կարծէիր: Նեղ լծեւերով մոխրագոյն զգեստ մը և զուգեցեւորքի բարձր կոշիկներ հագած էր: Ռեզակ մորթէ լայն գոտիէ մը կը կախուէր խաչակրի ահագին սուր մը՝ այնչափ երկայն, որ երախակալը հակային անութիւն կը զայլէր: Ելթէ երբեք տարտափ ազգէր զէնքը, սակայն տիրով գէմքը կը փարատէր տարտափը: Մարմնոյ նիհարութիւնը, կամարածեւ ընդունիւնքը և խորտեալ պէտքերը՝ գէմքին մեղմամղձոտ և ժպտուն արտայայտութիւն մը կու տային. աղու մը զէմքէն նման անկեղծ և պարզ գէմք մըն էր: Անոր պարզութիւնը և զինուորական կերպը սիրեց Արշեղուցքի:

— Տեղակալ, — հարցուց հսկայն, — Վիսնիսովեցքի իշխանին կը ծառայես:

— Այո՛:

Լիթուանիացին ազօթոգի մը նման ձեռքերը միացուց և աչքերը երկինք բարձրացուց:

— Ահ, ինչ ազնուական իշխան, ինչ ասպետ, սրշափ մեծ զօրավար:

— Աստուած իրեն նման շատեր տայ Հասարակապետութեան:

— Այո՛, այո՛: Կարելի չէ՞ արդեօք որ ես ալ իրեն գորշակին տակ զինուորորմ:

— Ինչո՞ւ չէ՞. կարծեմ շատ ուրախ ալ պիտի ըլլայ:

— Այն ատեն, — մէջ մտաւ Զակոպա, — իշխանը իրեն արամաբարութեան տակ պիտի ունենայ երկու զէնք, զքեզ և քու ահագին սուրը: Դուն կրնաս ծառայել իրրեւ կախաղան աւագակաց համար և իրրեւ կանգուն ասուի չափելու: Ամօթ. կաթմոյի ես և միւս լիման ցիցի մը չափ երկայն:

— Մըշափ ձանձրանալի է քեզի մտիկ ընելը, — ըսաւ հանգարտութեամբ Լիթուանիացին:

— Անունդ ի՞նչ է, հարցուց Արշեղուցքի. Զակոպայի ծիծաղներէն և կոտակախօսութիւններէն բան մը չկրցայ հասկնալ:

— Բոտպիրիկնաւ:

— Շատոնց է որ Լիթուանիայէն հեռացեր ես:

— Երկու շաբաթէ ի վեր հոս եմ: Գարձկ պիտանալով՝ հոս կիցայ, որպէս զի խնդրեմ քեզմէ որ աղերսս ներկայացնես իշխանին:

— Սակայն, ինչորեմ, ըսէ ինծի լծ ինչո՞ւ այդ գահէն սուր կը կրես:

— Խաչակրի սուր մըն է, և ես զայն կը կրեմ վասն զի պատերազմի մէջ ձեռք բերուած և բաւական ժամանակէ ի վեր մեր բնաւանաց կը պատկանի: Լիթուանիացի ձեռքերու մէջ, Գոյնիդիցի տակ, ցուցեր է իրեն արժանիքը, և ահա լծէ ինչո՞ւ համար ես ալ զայն կը կրեմ:

— Բայց շատ ծանր պէտք է ըլլայ, և անշուշտ երկու ձեռքով կը գործածուի:

— Երկու կամ մէկ ձեռքով, նոյն բանն է:

— Տեսնած:

Լիթուանիացին սուր պատեանէն հանեց և սուաւ անոր, սակայն Արշեղուցքի բազուկը զայն վերցնելու անկարող եղաւ: Փորձեց երկու ձեռքով վերցնել, բայց նորէն ծանրութիւնը մեծ էր: Շիկնելով՝ չորս կողմը նայեցաւ ու հարցուց.

— Հապա, տեսքը, ո՞ր կրնայ խաչ մը գծել այդ զէնքով:

— Արդէն փորձեր ենք, — պատասխանեցին ուսմը: — Միայն Սասկիլիքովքի կրնայ վերցնել զայն, սակայն խաչ մը գծել ո՞չ երբեք:

— Լաւ, իսկ գո՞ւն, — հարցուց Արշեղուցքի Լիթուանիացիին:

Բոտպիրիկնալ լծելու գաւազանի մը նման վերցուց ահալին սուրը. և այնպիսի լծափով մը շատ անգամ վերսին վրայ դարձուց զայն՝ որ ցնցուած օդը կը սուլէր:

— Ահ, սքանչելի, — պոչեց զարմացմամբ Արշեղուցքի, — համարէ լծէ արդէն իշխանին ծառայութեան մէջն ես:

— Աստուած գիտէ թէ որչափ կը փափազիմ այդ բանին, գլխ սուրս պատահանին մէջ ժամպոստելու վտանգէն աղաւթ կ'ըլլայ:

— Մեզդ որ, — ցած ձայնով բտա Զապուլա, — նա նոյն կերպով չի գիտեր իրեն իրողը կոտորածը:

Նստակին — ոստականը անմիջապէս ոտք ելաւ, և Սքեհպուրիին հետ դուրս ելլալու վրայ էր, երբ ներս մտաւ սպիտակահեր մարդ մը և խօսքը իրեն ուղղելով ըսաւ.

— Հոս գեղդ գտնալու եկայ:

Պարսպաշէն էր նա, Չէրքասիի գնդապետ:

— Միտսին տուն երթանք, — ըսաւ Ստալիլիբուլիին, Հոս ծովին կը խղճուի մարդ, և մութ է գիշերուան պէս:

Դուրս ելան, անոնց հետ մէկտեղ Սքեհպուրիին ալ:

Դանէն դուրս ելլալուն վերջ, Պարսպաշէն հարցոյց.

— Խօսիւնեցքի լըայօք ինչ լուր կայ:

— Սէչիա փախեր է: Այս սպայն երկէ անապատ դաշտին մէջ հանդիպեր է անոր:

— Ուրեմն գետով չէ՞ գնացած: Իսկ ես գինքը ձերբակալելու համար Քուտաք մարդ ղրկեցի... Ահ, Տէր իմ և Աստուած իմ, դուն փրկէ զմեզ, — և Պարսպաշէն ձեռքերով երեսը գոցեց:

— Ինչ կասկած ունիտ:

— Գիտան թէ քովս եղած պաշտօնական թուղթերը գողցեր է... Բաւական է որ հրատարակէ զանոնք, աշխարհ տակնու վրայ կ'ըլլայ... Կայք մը՝ վառօդի ամբարանոցի մէջ, կը հասկնան... միայն թէ թագաւորը պատերազմ հրատարակէ Մսլիմանաց դէմ:

— Յեղափոխութիւն մը կը դուշակես:

— Գաշակե՛լ... արդէն սկսած կը տեսնամ: Գայն: Լաւ գիտեմ, Խօսիւնեցքի չափաւորը պիտի ընէ քան ինչ որ իրին Նալիվայիք և Լոպպա:

— Սակայն ո՞վ պիտի երթայ անոր հետեւին:

— Ո՛վ... Զարբոտփները, Ղազախները, քաղաքացիք, գիւղացիք, հասարակ ժողովուրդը, բոլոր այս խառնիճաղանքը:

Եւ Պարսպաշէն առեւտուրի հրապարակը կը

ցուցներ, որ լեցուն էր մոխրագոյն խոշոր եզներով՝ որոնք բանակին համար Քորսուն պիտի ձմաբուկին, և որոնք կ'առաջնորդէին իրենց կիսնքը անմշակ դաշտին և անապատին մէջ անցընող հովիւներ, վայրենի և բնաւ կրօնքի մը չհետևող մարդիկ, (*religionis nullius*, ինչպէս կը բացատրէր Քրիզէլի կառավարիչը): Ասոնց մէջ կը գտնուէին ամէն տեսակ ցնցոտիներով ծածկուած ձառագէժ մարդիկ՝ որոնք աւելի աւազակներու կը նմանէին քան թէ հովիւներու: Շատերը հագուած էին ոչխարի մորթէ զգեստներ, բուրդի կողմը դուրս և գիմացը բաց, կը տեսնուէին առնապատ դաշտի հովէն այրած մերկ կուրքերը: Այնքն ալ զինուած էին տարբեր զէնքերով. նետ, լայն բերան հրացան, հրացան, թաթար սուր, գերանդի, ծայրը ձիու ծնօտով զարդարուած լախտ: Կային նաեւ դաշտեցիներ, նոյնպէս վայրենի, թէպէտ քիչ մ'աւելի լաւ հագուած: Մշակելու բերքի էին չորցած ձուկ, որսի կենդանիներ, ոչխարի ճարպ: Կային աղաբարձ խաշնարածներ, առնապատ դաշտի և անտառի մեղուաբոյժներ, մեղրը մամէն զտողներ, ձիւթ և կուպր վաճառող անտառաբնակներ, բռնաբարձ գիւղացիներ, կանոնաւոր Ղազախներ, Պեղկուրտի թաթարներ, և Աստուած գիտէ, աշխարհին ամէն կողմէն ուրիշ ինչ թափառաշրջիկներ և չարագործներ:

Քաղաքը գինեգներով լեցուն էր, և փոխանակ վաճառատնի մ'ըլլալու, զարձեր էր կերութեամբ և շուսյաութեամբ վայր: Հրապարակը բոցերու մէջ էր, հոս հոն կուպրի պարսպ տակառներ կը վառէին: Խաղաղցիչ խոտնաձայն ալմուկ մը, անփելի աղաղակ մը: Թմբուկներու զարկներ, թաթար սրիդներու սուր ձայնը կը խառնուէին բառայներու, տայիներու, քնարի մեղամաղձիկ ձայներու, որոնց իշխիկներէն կոյրեր՝ երգելով ժամանակին սիրելի երգը:

Աստեղաց աշխարհը — Կը թռչիս, կը թռչիս

Իմ վեհ բազէս — և կը տեսնաս հեռուն:

Գինով և կուպրով օծուած Ղազախներու ոտնոցը կը բարձրանար, ազգային պար մը կը պարէին՝ ոտքեր կոխկոսելով: Ակնարկ մը

բաւական եղաւ՝ նախկին—նստիկանը համոզելու որ Պարապաշ իրաւունք ունէր՝ երբ կ'ըսէր թէ ամենափոքր զրգիւտ մը բաւական պիտի ըլլար այդ վարդնի մարմնի բոնուածին հետ և կողոպուտի մղելու համար։ Այդ մարմնին գաս՝ կային Ալէիան և Զարսրոփ Ղազարները, զիս նոր նուաճուած և միացեալ Հասարակապետութեան, որոնք սակայն իրենց սանձը կը կրծէին՝ յիշելով իրենց հին արածունութիւնները, որոնք չէին հանգուածներ ոտովկանաց և որոնք կազմուած կերպաւ այժմ կը ձեւացնէին։ Այս այժմ սիրելի էր նաեւ գատաին՝ որ Հասարակապետութեան մնացած գաւառներուն պէս հլու հպատակ չէր, վասն զի սահմանակից էր Զորդովներին՝ ուր կը տիրէր անիշխանութիւնը և չարագործութիւնը։

Եւ ծերը տաւոր կերպով հառաչեց, նախկին լիւթիքայի, Լուստի, Խորմուքի ժամանակը կը յիշէր։ Ռուսիոյ սերիշ կողմերէն շատ աւելի ծաղկած էր աւազակութիւնը Ռեզանիոյ մէջ։ Դարձեալ, աղէկ գիտէր որ թմինքները միայն՝ այն հոշակաւոր յեղափոխականներուն քսանէն աւելի կ'աժդէր։ Հիմայ պայծառ կը տեսնար թմինքներին Ալէիա փախչելէն աւելի զալիք բուրս վտանգը, մանաւանդ որ ձեռքն էին թագաւորական հրովարտակները՝ լի խոտուածներով առ Ղազարիս և բնիկիմալը։

— Գնդապետ, — ըսաւ նա Պարապաշին, — պէտք ես տեսնամք Ալէիա երթալ թմինքներէն ազդեցութիւնը չէզոքացնելու և ոգիները խաղաղցնելու համար։

— Ահ, տէր գրօշակակիր, — գոչեց Պարապաշ, — կը տեսնուի որ չես գիտեր թէ թմինքներէն պաշտօնական թաղիքները ձեռքը փախչելուն լուրը լուռելուն պէս՝ իմ մարդիկներուս կէտը՝ նայն իսկ այս գիշեր՝ մեկնեցան Զեքքաթինը դէպի Ալէիա։ Այն իմ ժամանակն անցեր է ... ինծի գերեզմանը պէտք է, և ոչ հրամանատարութեան գաւազանը։

Իրաւունք, Պարապաշ թէպէտ քաղ զինուոր, բայց ծեր էր և հեղինակութիւնը կորսնցուցած։ Այսպէս խօսելով՝ ծեր գրօշակակիրն առնուր մտան, հոն ծերունին խնայողի շիշին զինաց նստած՝ քիչ մը հանդարտեցաւ։

— Այդ ամէն բան նշանակութիւն չունեար, — սկսաւ ըսել, — եթէ, ինչպէս կը լսուի, Մարիմանաց դէմ պատերազմը տեղի ունենայ, որ շատ հաւանական է, որչափ ալ չուզէ Հասարակապետութիւնը և որչափ ալ Աւագանին թախանձէ զթագաւորը, այս ստեղծ է որ թագաւորը հաստատուն պիտի կենայ, և այն ատեն բոլոր այդ սրբիկը կարելի է դարձնել թրքաց պէմ ... Յամենայն դէպս զիս ժամանակ կայ։ Ես տեսնամ կ'երթամ Քարաքիւքի քով, ամէն բան կը պատմեմ, և կ'ը ինչպիսի որ իրեն գումարտակներով քիչ մ'աւելի մտնենայ մեզի։ Չեմ գիտեր թէ պիտի յաջողիմ, վասն զի թէպէտ փորձառու զինուորի մը քաղութիւնն ունի, բայց յամառ է։ Դուն, գնդապետ, — ըսաւ Պարապաշին, — պատարաստ բռնէ Ղազարները, իսկ զուտ տեղակալ, Լուստի հասնելու պէս իմացուր իշխանին։ Բաւական է աչքը Ալէիայի վրայ դարձնել։ Եթէ շուտով իսկ ուզեն շարժել, դարձեալ ժամանակ ունինք։ Այս եղանակին Հասարակապետութեան մէջ քիչ մարդ կը գրտնուի։ Ոմանք որսորդութեան հելեր են, ուրիշներ ձկնորսութեան, իսկ մնացածը բոլոր Ռեզանիոյ դաշտերու մէջ ցրուած են ... Մինչեւ որ հաւաքուին՝ Տնիքերի կամուրջներու տակէն շատ ջուր պիտի անցնի։ Բաց աստի, իշխանին անունը միայն լսելով՝ կը զարհուրին կը լքանին, և երբ գիտնան որ նա կը հսկէ Զորդովներին վրայ, հարիւրին իննուունինը մաս մ'անգամ չեն շարժեր։

— Երկու օրս, — ըսաւ Արշեպուսքի, — կրնամ մեկնիլ։

— Այդի՛ս, Երկու կամ երեք օր բան մ'ըսել չէ։ Առ այժմ դուն, գնդապետ, ի ծառայութեան եղող գրօշակակիրն և իշխան Տոմինիկոսին թղթատարները դրկէ շուտով ... Էհ, քեզի կ'ըսեմ, գնդապետ ... կը քնանաս։

Իրաւունք, Պարապաշ ձեռքերը փորին վրայ դրած կը քնանար. քիչ վերջը սկսաւ խորալ։ Երբ ծեր գնդապետը չէր ուտեր կամ չէր խմեր՝ քունը կու գար։

— Տես, — ըսաւ Սասիլիլիքովսքի Արշեպուսքիին, — Եւ սակայն վաւարաբայ մէջ կը համարին թէ այսպիսի ծեր մը կարող է սան

ձեւ Ղազարիները: Գրողը տանի գամէնքն ալ, Ենթադրէ որ նոյն իսկ Խմբիներեցքի վրայ վստահ էին. մասնաւանդ զիստապետը անոր հետ չեմ գիտեր ինչպիսի բանակցութիւն մը սկսեք էր:

Սքեշիւոցքի հառաչեց միայն: Պարապաշ, միշտ աւելի ուժով խորագալով, բնոյ մէջ կը մրմնար.

— Տէր, Տէր, դուն ազատէ զմեզ:

— Երբ մտապիւր ես մեկնելու, — հարցուց զրօշակակիրը Սքեշիւոցքի:

— Տարակոյս չկայ որ Զափլինոքիին պէտք եմ սպասել, անշուշտ մենամարտիլ պիտի ուզէ:

— Է՛հ, թո՛ղ. զինքը չես ճանչնար: Եթէ չգիտնար որ Վիսնիովիեցքիի գրօշին տակ կը գինիութիւն, իրեն տեղը մասնաւանդ իրեն ներէն մէկը կը զրկէր. Սափայն իշխանին հետ խաղալ չըլլար:

— Անոր լուր կ'ուզարկեմ թէ պատրաստ եմ երբ կ'ուզէ, և երկու կամ երեք օրէն կը մեկնիմ: Անոր դարաններէն ալ վախ չունիմ:

Ան ըսելով Սքեշիւոցքի բարեւեց և դուրս ելաւ:

Հրապարակին վրայ վառուղ բոցերը կարմիր լոյս մը տարածեք էին քաղաքին վրայ. կարծես ամբողջ Զիկրին հրդեհէի մը ճարակ եղած էր: Խառնաձայն աղմուկը երթալով կը բարձրանար. մէկ կողմը՝ հովիւները առնապատ դաշտին տխուր երգերը կ'երգէին. աւելի անդին՝ վայրենի Զաբորոժնիերու խումբ մը՝ կրակին չորս կողմը կը պարէր, զլիարկները օդին մէջ նետելով, հրացաններ պարպելով և օդի խմելով: Մերթ ընդ մերթ վեճ մը, կռիւ մը կը փրթէր, զոր ծերադպիք կը խաղաղցնէին: Սքեշիւոցքի բռնադատուեցաւ հրրմակեցելով իրեն ճամբայ բանուլ. ապմուկը և աղաղակները լսելով՝ վայրկեան մը համարեցաւ թէ աղկիւն սկսեք է յեղափոխութիւն: Կարծեց թէ սպառնալից ակնարկներու և նախատանաց նշանակ եղեր է: Ահանջին մէջ կը հնչէին միշտ Պարապաշի խօսքերը. « Տէր, Տէր, դուն ազատէ զմեզ »:

Եւ հովիւները աւելի բարձր կ'երգէին, և Զաբորոժնիերը հրացանի հարուածներ կը պարպէին, և օդին գետի պէս կը վազէր:

Սքեշիւոցքի քննադատ գնաց. հեռուէն կը հասնէին ականջին հրացանի ձայնները և ամբողջին աղաղակները:

Թրգմ. Հ. Ա. ԳՈՆՏԱՔՅԱՆ

ՐՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԿ

(ՏԱՍՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԴԵՊԵՐՏԸ)

1896—1908

Առ Մ. Գ.

Կէսօրուան ամենէն հրատապ ժամն էր. արեւը սակայն քողարկուած՝ այնպիսի նուազկոտ գոյն մը առած, որ կարծես խաղաղ լուսնակայ մը կը շողէր՝ գալարաւէտ բարձրութեանց վրայ, որոց անկիւններէն կը յայտնուէր իզմիտի ծոցը, ծիծաղկոտ և մոգական, ինչպէս պատմութեան երջանիկ էջ մը:

Այդ պահուն էր, երբ գիւղացի մը, յիսնամեայ, բայց ծերունիի վսեմ երեւոյթով և ալեծածան մտաւորով, մազոտ կուրծք բաց և աչքերը կապոյտ՝ կարծես իր երկնքէն գողցած, կողով մը կ'անակին վրայ՝ կ'անցնէր լեռնային անձուկ ճանապարհէ մը՝ արեւելեան երգ մը մրմնջելով:

Զախ թեւին վրայ բազմած էր նկարչական ցնցոտիի մը մէջ հոռամայ սղայ մը՝ որ լաւագոյն զգեստի մը մէջ հրեշտակ մը պիտի թուէր: Իջնուրէն՝ փոքրիկ բժշկի ցուցնելու կը տանէր. վսեմ զի իր Մ..... գիւղին մէջ միշտ բացակայ եղած էին երկու ամենակարեւոր մարդիկը. բժիշկը և վարժապետը: Եւ երգելով զիցազնի մը քաջութիւնը կը ներթողէր. և արձագանդը, որ կ'ընկերէր իրեն՝ ներպաշնակութիւն մը կու տար: Երբեք կը լռէր, և որդոյն դառնալով, — իրբեք թէ բան մը հասկնար ան —, խաղաղաւորութեամբ մը կ'ընէր. « Խաչիկ, բո պապ է քաջ Աւագը՝ որուն զիցազնութիւնները կը պատմեմ »: Յետոյ, նորէն կը սկսէր լեռներուն պատմել Աւագին գործերը: